

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ
ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

03

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՖԻՐՄԱՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ. ՎԱՐՉԱԿԱԶՄ.
ՏՐԱՆՍՊՈՐՏ

03.120.20

1. Մշակող

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ,
ք. Երևան, Կոմիտասի պող. 49/2

2. Ստանդարտացման օբյեկտը ստանդարտների դասակարգչի (ՄԴ) կողմից նշումով

Կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքների իրականացման կարգը, ՄԴ 03.120.20:

3. Ազգային ստանդարտի նախագծի անվանումը

ՀՍ «Համապատասխանության հավաստման համակարգ. Կառավարման համակարգերի սերտիֆիկացում»:

4. Համապատասխան միջազգային ստանդարտի դրույթներից տարբերվող դրույթները

Միջազգային ստանդարտ տվյալ ստանդարտացման օբյեկտի վերաբերյալ բացակայում է:

5. Հրապարակորեն քննարկման ժամկետը

Երկու ամիս:

6. Դիտողությունների ընդունումը իրականացվում է հետևյալ հասցեով

0051, ք. Երևան, Կոմիտասի պող., 49/2

Հեռ./ֆաքս: (37410) 28-56-20;

E-mail: sarm@sarm.am

7. Ազգային ստանդարտի նախագիծը կարելի է ձեռք բերել

0051, ք. Երևան, Կոմիտասի պող., 49/2

Հեռ. (37410) 23-58-51

ֆաքս (37410) 28-56-20

E-mail: press@sarm.am

կայք www.sarm.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Համապատասխանության հավաստման համակարգ
ԿԱՌԱՎԱՐԱՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և ստանդարտացման աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀԱՍ 1.0-2001 «Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ» ստանդարտով:

Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի կողմից

3 ՀԱՍՏԱՏՎԵԼ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ ՀՀ էկոնոմիկայի նախարարի (ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի) 2009 թվականի -ի N հրամանով

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում, հմ.

5 ՀԱՍ 5.7-2005 և ՀԱՍ 5.11-2005 ՓՈԽԱՐԵՆ

Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրատարակվում են «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուի մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրատարակվի նշված տեղեկատուի մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի ինտերնետային կայքում (www.sarm.am):

Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն՝ առանց ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի թույլտվության

Բովանդակություն

1 Կիրառման ոլորտը	1
2 Նորմատիվ վկայակոչումները	1
3 Տերմինները և սահմանումները.....	2
4 Ընդհանուր դրույթները.....	3
5 Կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքների իրականացման կարգը	3
6 Սերտիֆիկացման մասնակիցների գործառույթները	13
7 Սերտիֆիկացված կառավարման համակարգերի համապատասխանության նշանի կիրառումը	15
8 Սերտիֆիկացված կառավարման համակարգերի համապատասխանության հսկողությունը.....	15
Չավելված Ա (պարտադիր) Կառավարման համակարգի սերտիֆիկացման հայտի ձևը	18
Չավելված Բ (հանձնարարելի) Արտադրության (ծառայության մատուցման) վիճակի նախնական գնահատման ելակետային տեղեկատվության ձևը.....	20
Չավելված Գ (հանձնարարելի) Չարցաթերթիկի ձևը.....	22
Չավելված Դ (պարտադիր) Ըստ հայտի կառավարման համ	23
Չավելված Ե (պարտադիր) Անհամապատասխանությունների արձանագրության ձևը	24
Չավելված Զ (պարտադիր) Կառավարման համակարգի սերտիֆիկացման նախնական աուդիտի արդյունքների և գնահատման ակտի (աուդիտի ակտի) ձևը	25
Չավելված Է (պարտադիր) Կառավարման համակարգի սերտիֆիկատի հանձնման (մերժման) որոշման ձևը.....	27
Չավելված Ը (պարտադիր) Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատի ձևը	28
Չավելված Թ (պարտադիր) Չանապատասխանության սերտիֆիկատի օգտագործման պայմանագրի ձևը.....	32
Չավելված Ժ (պարտադիր) Սերտիֆիկացված կառավարման համակարգի համապատասխանության հսկողության աուդիտի պլանը.....	36
Չավելված ԺԱ (պարտադիր) Սերտիֆիկացված կառավարման համակարգի համապատասխանության հսկողության ակտի ձևը	38
Չավելված ԺԲ (պարտադիր) Սերտիֆիկացված կառավարման համակարգի համապատասխանության հսկողության աուդիտի հաշվետվության ձևը	40
Մատենագիտություն.....	42

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԱՆԴԱՐՑ

**Համապատասխանության հավաստման համակարգ
ԿԱՌԱՎԱՐԱՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ**
**Система подтверждения соответствия
Сертификация систем управления**
**Conformity assessment system
Management systems certification**

Գործարկման թվականը

1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտով սահմանվում են համապատասխանության հավաստման համակարգում կառավարման համակարգերի (որակի կառավարման համակարգ, էկոլոգիական կառավարման համակարգ, սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգ և այլն) սերտիֆիկացման աշխատանքների իրականացման կարգը:

Սույն ստանդարտը նախատեսված է կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների (այսուհետ՝ սերտիֆիկացման մարմիններ), կառավարման համակարգեր ներդնող կազմակերպությունների, կառավարման համակարգերի աուդիտոր (փորձագետ)ների կողմից կիրառման համար:

2 Նորմատիվ վկայակոչումները

Սույն ստանդարտում վկայակոչված են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը.

ՀԱՍ 5.6-2000 Համապատասխանության հավաստման համակարգ. Համակարգի գրանցամատյանների վարում

ՀԱՍ ԻՍՕ 9000-2006 Որակի կառավարման համակարգեր. Հիմնական դրույթներ և բառարան

ՀԱՍ ԻՍՕ 9001-2009 Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ

ՀԱՍ ԻՍՕ 14001-2005 Էկոլոգիական կառավարման համակարգեր. Ընդհանուր պահանջներ կիրառման վերաբերյալ

ՀԱՍ ԻՍՕ 14050-2007 Էկոլոգիական կառավարում. Բառարան

ՀԱՍ ԻՍՕ/ԻԷԿ 17000-2004 Համապատասխանության գնահատում. Բառարան և ընդհանուր սկզբունքներ

ՀԱՍ ԻՍՕ/ԻԷԿ 17021-2006 Համապատասխանության գնահատում. Կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում իրականացնող մարմիններին ներկայացվող պահանջներ

ՀԱՍ ԻՍՕ 19011-2005 Որակի կառավարման համակարգերի և (կամ) էկոլոգիական կառավարման համակարգերի աուդիտի վերաբերյալ ղեկավար ցուցումներ

ՀԱՍ ԻՍՕ 22000-2006 Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր.
 Սննդի շղթայում ընդգրկված կազմակերպություններին ներկայացվող պահանջներ
 ՀԱՍ ԻՍՕ/SU 22003-2008 Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր.
 Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում
 իրականացնող մարմիններին ներկայացվող պահանջներ

Ծ ա ն ո թ ու յ ու ն: Սույն ստանդարտից օգտվելիս նպատակահարմար է ստուգել վկայակոչված ստանդարտների գործելը Հայաստանի Հանրապետությունում՝ ըստ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության ստանդարտների համապատասխան կատալոգի և ընթացիկ տարում հրատարակված համապատասխան տեղեկատուների: Եթե վկայակոչված փաստաթուղթը փոխարինված է (փոփոխված է), ապա սույն ստանդարտից օգտվելիս պետք է ղեկավարվել փոխարինված (փոփոխված) ստանդարտով: Եթե վկայակոչված փաստաթուղթը չեղյալ է հայտարարված առանց փոխարինման, ապա այն դրույթը, որում վկայակոչված է այդ ստանդարտը կիրառվում է այն մասով, որը չի շոշափում այդ վկայակոչումը:

3 Տերմինները և սահմանումները

Սույն ստանդարտում կիրառված են տերմիններ՝ ըստ ՀԱՍ ԻՍՕ 9000, ՀԱՍ ԻՍՕ 14050 ՀԱՍ ԻՍՕ/ԻԷԿ 17000, ՀԱՍ ԻՍՕ/ԻԷԿ 17021, ՀԱՍ ԻՍՕ 19011 և ՀԱՍ ԻՍՕ/SU 22000 ստանդարտների, ինչպես նաև հետևյալ տերմինները՝ համապատասխան սահմանումներով.

3.1 կառավարման համակարգի սերտիֆիկացում (сертификация системы управления, management systems certification)՝ ընթացակարգ, որի համաձայն երրորդ կողմը գրավոր հավաստում է, որ կառավարման համակարգը համապատասխանում է սահմանված պահանջներին:

3.2 կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին (орган по сертификации систем управления, management systems certification body)՝ կառավարման համակարգերի համապատասխանության հավաստման աշխատանքների կատարման համար հավատարմագրված իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

3.3 կառավարման համակարգի սերտիֆիկատ (сертификат системы управления, management systems certificate)՝ կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից տրված փաստաթուղթ, որը հավաստում է կառավարման համակարգի համապատասխանությունը սահմանված պահանջներին:

3.4 կառավարման համակարգ (системы управления, management system)՝ համակարգ՝ քաղաքականության և նպատակների մշակման և այդ նպատակներին հասնելու համար:

3.5 աուդիտոր (փորձագետ) (аудитор, auditor)՝ անձ՝ օժտված աուդիտ անցկացնելու իրազեկությամբ:

3.6 տեխնիկական փորձագետ (технический эксперт, technical expert)՝ անձ, որն ունի աուդիտի ենթարկվող օբյեկտի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ և (կամ) փորձ:

Ծ ա ն ո թ ու յ ու ն ն ե ր:

1 Մասնագիտական գիտելիքները կամ փորձն ընդգրկում են աուդիտի ենթարկվող կազմակերպության, գործընթացի կամ գործունեության նկատմամբ կիրառելի գիտելիքներ կամ փորձ, ինչպես նաև լեզվի և մշակույթի իմացություն:

2 Տեխնիկական փորձագետն աուդիտի խմբում չունի աուդիտոր (փորձագետ)ի լիազորություններ:

4 Ընդհանուր դրույթները

4.1 Կառավարման համակարգերի սերտիֆիկացումն իրականացվում է կամավոր՝ հայտատուի (կազմակերպության) նախաձեռնությամբ:

4.2 Կառավարման համակարգերի սերտիֆիկացումն իրականացվում է՝

- վստահեցնելու համար արտադրանքի (ծառայության) սպառողներին, կազմակերպության ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին, որ կազմակերպության կառավարման համակարգերը համապատասխանում են սահմանված պահանջներին,

- կառավարման համակարգի արդյունավետ կիրառման, ինչպես նաև անընդհատ բարելավման գործընթացների միջոցով, սպառողների բավարարվածության բարձագման նպատակով:

4.2.1 Վստահություն ներշնչելու սկզբունքները ներառում են.

- անկողմնակալությունը,
- իրազեկությունը,
- պատասխանատվությունը,
- թափանցիկությունը,
- զանգատներին արձագանքումը:

4.3 Կառավարման համակարգերի համապատասխանության սերտիֆիկատի առկայության դեպքում, սերտիֆիկացված կառավարման համակարգերի գործառնության, այդ թվում՝ արտադրանքի (ծառայության) բնութագրերի կայունության հսկողությունն իրականացվում է կառավարման համակարգերի համապատասխանության հսկողության միջոցով:

4.4 Կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքներն իրականացնում են կառավարման համակարգերի համապատասխան ոլորտում հավատարմագրված սերտիֆիկացման մարմնի օրենսդրությամբ սահմանված կարգով վկայագրված աուդիտորները (փորձագետները):

4.5 Կառավարման համակարգերի սերտիֆիկացման ժամանակ պետք է պահպանվեն կազմակերպության առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունների գաղտնիությունը:

4.6 Միջազգային սերտիֆիկացման համակարգերի շրջանակներում կառավարման համակարգերի սերտիֆիկացումն իրականացնում են այդ համակարգերի կանոններով, եթե համակարգը և համակարգի համապատասխանության նշանը ճանաչվել է համապատասխանության հավաստման ազգային մարմնի կողմից և դրանք գրանցված են համապատասխանության հավաստման համակարգի պետական գրանցամատյանում՝ ՀԱՍ 5.6 ստանդարտի պահանջներին համապատասխան:

4.7 Կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքները ներառում են՝

- սերտիֆիկացման հայտի ներկայացումը և գրանցումը,
- հայտի վերլուծությունը,
- աուդիտի կազմակերպումը,
- կառավարման համակարգերի սերտիֆիկացման աուդիտը՝ 1-ին փուլ և 2-րդ փուլ,
- սերտիֆիկացման աուդիտի արդյունքների քննարկումը, համապատասխանության սերտիֆիկատի հանձնման մասին որոշման ընդունումը, դրա գրանցումը և հանձնումը,
- սերտիֆիկացված կառավարման համակարգերի համապատասխանության հսկողությունը:

5 Կառավարման համակարգերի սերտիֆիկացման աշխատանքների իրականացման կարգը

5.1 Կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում իրականացնող մարմիններին և գործընթացին ներկայացվող պահանջները սահմանված են ՀԱՍ ԻՍՕ/ԻԷԿ 17021 և ՀԱՍ ԻՍՕ 22003 ստանդարտներով:

5.2 Սերտիֆիկացման հայտի ներկայացումը և գրանցումը

5.2.1 Կառավարման համակարգի սերտիֆիկացման հավակնող կազմակերպությունը համապատասխան ոլորտում հավատարմագրված սերտիֆիկացման մարմին ներկայացնում է.

- ա) հայտը՝ ըստ Ա հավելվածի,
- բ) արտադրության (ծառայության մատուցման) վիճակի նախնական գնահատման ելակետային տեղեկատվության փաստաթղթերը՝ ըստ Բ հավելվածի,
- գ) հարցաթերթիկը՝ ըստ Գ հավելվածում տրված ձևի,
- դ) կառավարման համակարգի ձեռնարկը (ՎԱՎԿԿՀ¹⁾ (HACCP) պլանը),
- ե) կառավարման համակարգի փաստաթղթերը,
- զ) տեղեկատվություն կազմակերպության այն գործընթացների վերաբերյալ, որոնք իրականացվում են դրսից կադրերի ներգրավմամբ,
- է) տեղեկատվություն կառավարման համակարգի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու մասին:

Կառավարման համակարգի փաստաթղթերը և արտադրության (ծառայության մատուցման) վիճակի նախնական գնահատման ելակետային տեղեկատվության փաստաթղթերի կազմը և հարցաթերթիկում հարցերի ծավալը որոշում է սերտիֆիկացման մարմինը: Կոնկրետ կազմակերպության համար արտադրանքի արտադրության (ծառայության մատուցման) վիճակի նախնական գնահատման ելակետային տեղեկատվության փաստաթղթերին ներկայացվող պահանջները սահմանում է սերտիֆիկացման մարմինը՝ հաշվի առնելով կազմակերպության և թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայության) առանձնահատկությունները:

5.2.2 Տվյալ ոլորտում հավատարմագրված մի քանի սերտիֆիկացման մարմինների առկայության դեպքում, հայտատուն իրավունք ունի հայտը ներկայացնել այդ մարմիններից ցանկացածին:

5.2.3 Համապատասխան ոլորտում հավատարմագրված սերտիֆիկացման մարմնի բացակայության դեպքում, կազմակերպությունը կարող է դիմել համապատասխանության գնահատման ազգային մարմին, որը որոշում է ընդունում տվյալ կազմակերպության կառավարման համակարգի սերտիֆիկացումն իրականացնելու մասին:

5.2.4 Սերտիֆիկացման մարմինն ըստ հայտի որոշում ընդունում է այն ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

5.2.5 Ըստ հայտի որոշման ընդունումը ներառում է՝

ա) հայտի ընդունումն ի կատարում՝ սերտիֆիկացման մարմնի հավատարմագրման ոլորտի հետ կազմակերպության հայտագրված գործունեության ոլորտը համընկնելու դեպքում,

բ) հայտի ընդունման մերժում և դրա մասին ծանուցում հայտատուին:

5.2.6 Սերտիֆիկացման մարմինը հայտն ընդունելու դեպքում այն գրանցում է:

5.3 Հայտի վերլուծությունը

5.3.1 Սերտիֆիկացման մարմինը, նախքան աուդիտի գործընթաց սկսելը, պետք է իրականացնի հայտի և լրացուցիչ տեղեկատվության վերլուծություն՝ ապահովելու համար, որ.

ա) հայտատու կազմակերպության և նրա կառավարման համակարգի վերաբերյալ տեղեկատվությունը բավարար է աուդիտի իրականացման համար,

բ) սերտիֆիկացման պահանջները հստակ սահմանված ու փաստաթղթերով հիմնավորված են և ներկայացված են հայտատու կազմակերպությանը,

գ) սերտիֆիկացման մարմնի և հայտատու կազմակերպության միջև ցանկացած տարածայնություն լուծված է,

դ) սերտիֆիկացման մարմինն իրազեկ և ունակ է իրականացնելու սերտիֆիկացում,

ե) հաշվի են առնված սերտիֆիկացման ոլորտը, հայտատու կազմակերպության գործառնության վայրը (վայրերը), աուդիտների իրականացման ժամկետները և սերտիֆիկացման գործընթացի վրա ազդող այլ գործոնները (լեզուն, անվտանգության պայմանները, անկողմնակալության վրա ազդող վտանգները և այլն):

¹⁾ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքով սահմանված է «վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (ՎԱՎԿԿՀ) համակարգ» տերմինը

զ) պահպանված են աուդիտի իրականացման վերաբերյալ որոշումը հաստատող գրառումները:

5.3.2 Կառավարման համակարգերի (այսուհետև՝ համակարգ) փաստաթղթերի, այդ թվում՝ գրառումների վերլուծությունը՝ հաշվի առնելով աուդիտի չափանիշները, իրականացվում է աուդիտի խմբի կամ գնահատվող ոլորտի համար իրագրել աուդիտոր (փորձագետ)ի կողմից:

Կառավարման համակարգի փաստաթղթերի վերլուծության ժամանակ հաշվի է առնվում կազմակերպության մեծությունը (ծավալները), գործունեության տեսակը և բարդությունը, ինչպես նաև աուդիտի նպատակները, ոլորտը և ներառում է՝

- հայտի ուսումնասիրումը,
- արտադրության (ծառայության մատուցման) վիճակի նախնական գնահատման ելակետային տեղեկատվության փաստաթղթերի և հարցաթերթիկի վերլուծությունը,
- կառավարման համակարգի ձեռնարկի (ՎԱՎԿԿՀ (HACCP) պլանի) վերլուծությունը,
- նախորդ աուդիտների վերաբերյալ հաշվետվությունների (առկայության դեպքում) ուսումնասիրումը,
- գործընթացների կառավարման համար անհրաժեշտ պարտադիր ընթացակարգերի, կազմակերպության նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերի (կազմակերպության ստանդարտներ, տեխնոլոգիական հրահանգներ, տեխնիկական նկարագրեր) վերլուծությունը:

5.3.3 Հիմնավորված դեպքերում կառավարման համակարգի փաստաթղթերի վերլուծությունը կարող է հետաձգվել մինչև կազմակերպությունում աուդիտն սկսելու պահը, եթե դա չի խանգարի աուդիտի անցկացման արդյունավետությանը:

Եթե աուդիտի արդյունքներով կառավարման համակարգի փաստաթղթերը չեն բավարարում համապատասխանության հավաստման համակարգերի ստանդարտներով, այդ թվում՝ ՀԱՍ ԻՍՕ 9001 կամ ՀԱՍ ԻՍՕ 14001 կամ ՀԱՍ ԻՍՕ 22000 ստանդարտներով սահմանված կառավարման համակարգերի փաստաթղթերին ներկայացվող պահանջներին, ապա աուդիտի խմբի ղեկավարն այդ մասին տեղեկացնում է կազմակերպությանը և որոշում է ընդունում աուդիտը շարունակելու կամ դադարեցնելու մասին՝ մինչև փաստաթղթերի անհամապատասխանությունների վերացումը:

5.3.4 Աուդիտի խումբն իրականացնում է արտադրանքի արտադրության (ծառայության մատուցման) վիճակի վերաբերյալ կազմակերպության ներկայացված նախնական գնահատման ելակետային տեղեկատվությունների և հարցաթերթիկի վերլուծություն, հաշվի առնելով՝

- աուդիտի չափանիշները,
- ՀԱՍ ԻՍՕ 9000 կամ ՀԱՍ ԻՍՕ 14000 կամ ՀԱՍ ԻՍՕ 22000 շարքի ստանդարտներով սահմանված կառավարման համակարգերին ներկայացվող պահանջները,
- կոնկրետ արտադրանքին (ծառայությանը) ներկայացվող պահանջներ սահմանող ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի պահանջները,
- կոնկրետ արտադրանքի (ծառայության) որակի և (կամ) էկոլոգիական բնութագրերի վերաբերյալ անկախ աղբյուրներից ստացված տեղեկությունները:

5.3.5 Հարցաթերթիկում նշված տվյալները պետք է ապահովեն աուդիտի վերաբերյալ եզրակացության ստացումը՝ աուդիտի չափանիշների և աուդիտի վկայությունների համադրության հիման վրա:

5.3.6 Աուդիտի խումբն անհրաժեշտության դեպքում կարող է կազմակերպությանը հարցում անել լրացուցիչ տվյալների մասին կամ իր ներկայացուցչին ուղարկել անմիջապես կազմակերպությունում լրացուցիչ տեղեկություններ հավաքելու համար:

Տեղեկատվության հավաքումը կարող է իրականացվել աշխատողների հարցումների, կազմակերպության գործունեության, արտադրական և աշխատանքային պայմանների ուսումնասիրման միջոցով:

5.3.7 Կառավարման համակարգի փաստաթղթերի վերլուծության արդյունքները ձևակերպվում են հաշվետվությամբ, որում ընդգրկում են նաև հայտի, արտադրանքի արտադրության (ծառայության մատուցման) վիճակի նախնական գնահատման ելակետային տեղեկատվության փաստաթղթերի, հարցաթերթիկի և կառավարման համակարգի այլ փաստաթղթերի վերլուծության արդյունքները և դրանց վերաբերյալ եզրակացությունը:

Հաշվետվության մեջ սահմանվում են նաև փաստաթղթերի վերաբերյալ դիտողությունների վերացման ժամկետները, որոնք չպետք է լինեն 6 ամսից ավելի:

Հաշվետվությունն ստորագրվում է աուդիտի խմբի ղեկավարի ու անդամների կողմից և հաստատվում է սերտիֆիկացման մարմնի ղեկավարի կողմից:

Հաշվետվությունը կազմվում է երկու օրինակից, որոնցից մեկը պահվում է սերտիֆիկացման մարմնում, իսկ մյուսը՝ տրամադրվում է հայտատուին:

Հաշվետվության մեջ տրված եզրակացությունների հիման վրա սերտիֆիկացման մարմինը հայտատուին է հանձնում նաև կառավարման համակարգի սերտիֆիկացման վերաբերյալ որոշումը՝ ըստ Դ հավելվածի:

5.3.8 Հայտատուն պետք է սերտիֆիկացման մարմին ներկայացնի կառավարման համակարգի փաստաթղթերում տեղ գտած անհամապատասխանությունների վերացումը հաստատող փաստաթղթերը, որոնք վերլուծման են ենթարկվում աուդիտի խմբի անդամների կողմից:

5.4 Աուդիտի կազմակերպումը

5.4.1 Կառավարման համակարգի սերտիֆիկացման աշխատանքների իրականացման համար սերտիֆիկացման մարմնի ղեկավարի կարգադրագրով ստեղծվում է աուդիտի խումբ:

Սերտիֆիկացման մարմինը վերլուծության հիման վրա պետք է որոշի, թե ինչ իրազեկությանը կարդեր են անհրաժեշտ աուդիտի խմբի կազմման և սերտիֆիկացման վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Աուդիտի խմբում ընդգրկված աուդիտորների (փորձագետների) իրազեկության մակարդակը պետք է համապատասխանի ՀԱՍ ԻՍՕ/ԻԷԿ 17021 ստանդարտի 7.2.5 կետով սահմանված պահանջներին:

Աուդիտի խմբի աուդիտոր (փորձագետ)ներից մեկը նշանակվում է աուդիտի խմբի ղեկավար:

Աուդիտի խմբում չեն կարող ընդգրկվել հայտատու կազմակերպությունում վերջին երկու տարվա ընթացքում կառավարման համակարգի ստեղծման համար ծառայություն մատուցած մասնագետները, ինչպես նաև կազմակերպության և կառավարման համակարգի սերտիֆիկացման արդյունքների համար շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները:

Աուդիտի խմբում կարող են ընդգրկվել աուդիտի (գնահատման) ենթակա կազմակերպության ոլորտին իրազեկ աուդիտոր (փորձագետ)ներ, ինչպես նաև անհրաժեշտ գիտելիքներ և փորձ ունեցող տեխնիկական փորձագետներ:

Աուդիտի խմբի աշխատանքներին կարող են մասնակցել նաև դիտորդներ՝ առանց աուդիտի խմբի անդամների լիազորությունների, ինչպես նաև աուդիտոր (փորձագետ)ի ղեկավարությամբ աշխատող՝ համապատասխան ուսուցում անցնող սկսնակ աուդիտոր (փորձագետ)ներ:

5.4.2 Հայտատուին անհրաժեշտ է նախապես տեղեկացնել կառավարման համակարգի աուդիտ (գնահատում) իրականացնելու համար ստեղծված աուդիտի խմբի կազմի մասին:

Հայտատուն իրավունք ունի հավաստի տեղեկություններ ստանալ աուդիտի խմբի անդամներից յուրաքանչյուրի մասին և օբյեկտիվ պատճառներով (աուդիտի խմբի անդամը վերջին երկու տարում աշխատել է գնահատման ենթակա կազմակերպությունում, մատուցել է խորհրդատվական ծառայություններ կամ մերժել է դրանք մատուցել, աուդիտի անցկացման ժամանակ ունեցել է ոչ պատշաճ վարվեցողություն կամ եղել է ոչ օբյեկտիվ) մերժել խմբի անդամի թեկնածությունը և պահանջել նրան փոխարինել: Մերժումը կամ փոխարինման պահանջը պետք է հիմնավորված լինի փաստերով:

5.4.3 Աուդիտի խումբը աուդիտի ծրագրի շրջանակներում պետք է սահմանի աուդիտի նպատակները, ոլորտը և չափանիշները:

Աուդիտի նպատակները պետք է ներառեն՝

ա) աուդիտի ենթարկվող կազմակերպության կամ դրա կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման համակարգի աուդիտի չափանիշներին համապատասխանության աստիճանի որոշումը,

բ) օրենսդրական, նորմատիվ, պայմանագրային պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով կառավարման համակարգի հնարավորությունների գնահատումը,

գ) կոնկրետ նպատակներին հասնելու համար կառավարման համակարգի արդյունավորության գնահատումը,

դ) կառավարման համակարգի բարելավման հնարավոր ոլորտների նույնականացումը:

Աուդիտի ոլորտն ընդգրկում է աուդիտի բովանդակությունը և սահմանները, գտնվելու վայրը, կառուցվածքային ստորաբաժանումները, աուդիտի ենթարկվող գործունեությունը և գործընթացները, ինչպես նաև աուդիտի ժամկետները:

Աուդիտի չափանիշները կիրառում են որպես հիմք համեմատման համար, որով որոշում են համապատասխանությունը:

Չափանիշները կարող են ներառել կառավարման համակարգի քաղաքականությունը, ընթացակարգերը, ստանդարտները, օրենքները, նորմերը, կանոնակարգերը, կառավարման համակարգին ներկայացվող պահանջները, պայմանագրային պահանջները կամ տնտեսության հատվածներին կամ ձեռնարկատիրական գործունեությանը վերաբերող կանոնների ժողովածուները:

5.4.4 Աուդիտ անցկացնելու համար պաշտոնական կամ ոչ պաշտոնական բնույթի սկզբնական կապն աուդիտի ենթարկվող կազմակերպության հետ հաստատում է աուդիտի խմբի ղեկավարը:

Սկզբնական կապ հաստատելու նպատակն է.

ա) աուդիտի ենթարկվող կազմակերպության ներկայացուցչի հետ տեղեկատվության փոխանակման ուղիների որոշումը,

բ) աուդիտ անցկացնելու համար լիազորությունների հաստատումը,

գ) աուդիտի առաջարկվող պլանի և աուդիտի խմբի կազմի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,

դ) համապատասխան փաստաթղթերից՝ ներառյալ գրառումներից օգտվելու թույլտվության ձեռքբերումը,

ե) տեղում աշխատանքների անվտանգության ապահովման անհրաժեշտ կանոնների սահմանումը,

զ) աուդիտի համար նախապատրաստական միջոցառումների որոշումը,

է) դիտորդների և աուդիտի խմբին ուղեկցող անձանց ներկայության համաձայնեցումը:

5.4.5 Կազմակերպության կառավարման համակարգի աուդիտն սկսելուց առաջ աուդիտի խմբի ղեկավարը մշակում է աուդիտի ծրագիրը՝ ՀԱՍ ԻՍՕ 19011 ստանդարտի 5-րդ բաժնի պահանջներին համապատասխան:

5.4.6 Կառավարման համակարգի աուդիտի ծրագիրը պետք է ներառի՝

- աուդիտի նպատակները և ծրագրի ծավալը,

- պատասխանատուները,

- ռեսուրսները,

- ընթացակարգերը,

- աուդիտի պլանը,

- աուդիտոր(փորձագետ)ների գնահատումը,

- աուդիտի խմբի ձևավորումը,

- աուդիտի աշխատանքների ղեկավարումը,

- գրառումների վարումը,

- աուդիտի ծրագրի ընթացաստուգումը և վերլուծությունը, որը ներառում է նաև՝ ուղղիչ և կանխարգելիչ գործողությունները, շահագրգիռ կողմերի պահանջումների որոշումը, բարելավման հնարավորությունների նույնականացումը:

5.4.7 Աուդիտի ծրագիրը պետք է այնպես կազմված լինի, որ հնարավոր լինի փոփոխություններ կատարել աուդիտի ընթացքում, ինչպես նաև ապահովի խմբի անդամների իրազեկության արդյունավետ օգտագործումը:

5.4.8 Կառավարման համակարգի աուդիտի ծրագիրն ստորագրում է աուդիտի խմբի ղեկավարը և համաձայնեցնում աուդիտի ենթարկվող կազմակերպության պատասխանատուի (կազմակերպության ղեկավարի կամ կառավարման համակարգի գործունեության պատասխանատուի) հետ ու հաստատվում է սերտիֆիկացման մարմնի ղեկավարի կողմից:

Աուդիտն սկսելուց առաջ հաստատված աուդիտի ծրագիրը ներկայացվում է ստուգման ենթակա կազմակերպությանը:

5.5 Կառավարման համակարգի սերտիֆիկացման աուդիտը

Կառավարման համակարգի սերտիֆիկացման աուդիտն իրականացվում է երկու փուլով՝ 1-ին և 2-րդ:

5.5.1 Աուդիտի 1-ին փուլը

Աուդիտի 1-ին փուլի իրականացման նպատակներն են.

ա) կազմակերպության կառավարման համակարգի փաստաթղթավորման աուդիտի իրականացումը,

բ) կազմակերպության գնվելու վայրի և առանձնահատկությունների գնահատումն ու կազմակերպության անձնակազմի հետ քննարկումների անցկացումը՝ աուդիտի 2-րդ փուլի իրականացման համար պատրաստվածության աստիճանը որոշելու համար,

գ) կազմակերպության կարգավիճակի և նրա կողմից սերտիֆիկացման վերաբերյալ պահանջների ընկալման վերլուծությունը, մասնավորապես՝ կառավարման համակարգի հիմնական բնութագրերի կամ կարևոր տարրերի, գործընթացների, խնդիրների և գործառնության մասով,

դ) կազմակերպության կառավարման համակարգի ոլորտի, գործընթացների և գտնվելու վայրի (վայրերի) և դրանց առնչվող օրենսդրական և կանոնակարգվող խնդիրների (օրինակ՝ կազմակերպության գործառնության որակի, էկոլոգիական և օրենսդրական խնդիրների, դրանց հետ կապված ռիսկերի և այլն) մասին անհրաժեշտ տեղեկատվության հավաքումը,

ե) աուդիտի 2-րդ փուլի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բաշխման վերլուծությունն ու կազմակերպության հետ աուդիտի 2-րդ փուլի մանրամասների համաձայնեցումը,

զ) աուդիտի 2-րդ փուլի պլանավորման համար նախադրյալների ապահովումը՝ հավաքելով բավարար ծավալով տեղեկատվություն կազմակերպության կառավարման համակարգի և գործառնության հնարավոր էական խնդիրների մասին,

է) ներքին աուդիտների և ղեկավարության կողմից վերլուծության պլանավորման և իրականացման, ինչպես նաև կառավարման համակարգի ներդրման գնահատումը՝ աուդիտի 2-րդ փուլի իրականացման համար կազմակերպության պատրաստվածության մակարդակը որոշելու համար:

Կառավարման համակարգերից մեծամասնության համար աուդիտի 1-ին փուլի վերջին մասը հանձնարարվում է իրականացնել կազմակերպության տարածքում՝ վերը սահմանված նպատակներին հասնելու համար:

Աուդիտի 1-ին փուլից ստացված տվյալները պետք է փաստաթղթերով հիմնավորվեն և ներկայացվեն կազմակերպությանը՝ նշելով այն խնդիրները, որոնք աուդիտի 2-րդ փուլում կարող են անհամապատասխանության պատճառ հանդիսանալ:

Աուդիտի 1-ին և 2-րդ փուլերի միջև ժամանակահատվածը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել աուդիտի 1-ին փուլում որոշված խնդիրները լուծելու համար կազմակերպության կարիքները: Սերտիֆիկացման մարմինը կարող է նաև փոփոխություններ կատարել աուդիտի 2-րդ փուլի ծրագրում:

5.5.2 Աուդիտի 2-րդ փուլը

Աուդիտի 2-րդ փուլի նպատակն է գնահատել կազմակերպության կառավարման համակարգի ներդրման աստիճանը, այդ թվում՝ արդյունավետությունը: Աուդիտի 2-րդ փուլը, որն իրականացվում է տեղում, պետք է ներառի.

- նախնական խորհրդակցության անցկացումը,
- աուդիտի ժամանակ տեղեկատվության փոխանակումը,
- ուղեկցող անձանց և դիտորդների դերին ու պարտականություններին ծանոթացումը,
- տվյալների հավաքումը և համադրումը
- աուդիտի եզրակացությունների ձևակերպումը,
- աուդիտի վերջնական եզրակացության նախապատրաստումը,
- եզրափակիչ խորհրդակցության անցկացումը:

5.5.2.1 Նախնական խորհրդակցությունն անցկացնում են աուդիտի ենթարկվող կազմակերպության ղեկավարության հետ կամ նրանց հետ, ովքեր պատասխանատու են աուդիտի ենթարկվող ստորաբաժանումների կամ գործընթացների համար:

Նախնական խորհրդակցության նպատակն է՝

- ա) աուդիտի պլանի հաստատումը,
- բ) աուդիտի ամփոփ պլանի տրամադրումը,
- գ) տեղեկատվության փոխանակման ուղիների հաստատումը,
- դ) աուդիտի ենթարկվող կազմակերպությանը հարցեր տալու հնարավորություն

ընձեռել:

Այլ դեպքերում նախնական խորհրդակցությունը համարում են պաշտոնական և գրանցում են ներկաներին: Խորհրդակցությունում նախագահում է աուդիտի խմբի ղեկավարը:

խորհրդակցության ժամանակ անհրաժեշտ է.

ա) ներկայացնել մասնակիցներին՝ ներառյալ նրանց դերն աուդիտում,

բ) հաստատել աուդիտի նպատակները, ոլորտները, չափանիշները,

գ) հաստատել աուդիտի պլանը և աուդիտի ենթարկվող կազմակերպության, աուդիտի հետ կապված այլ փոխադարձ համաձայնությունները (եզրափակիչ խորհրդակցության թվականը և ժամը, աուդիտի խմբի և աուդիտի ենթարկվող կազմակերպության ղեկավարության յուրաքանչյուր միջանկյալ խորհրդակցությունները և հետագա փոփոխությունների հնարավորությունները),

դ) ծանոթացնել աուդիտի մեթոդներին և ընթացակարգերին, այդ թվում՝ աուդիտի ենթարկվող կազմակերպությանը տեղեկացնել այն մասին, որ աուդիտի վկայությունները հիմնվելու են մատչելի տվյալների ընտրանքների վրա:

ե) հաստատել աուդիտի խմբի և աուդիտի ենթարկվող կազմակերպության միջև հաղորդակցման պաշտոնական ուղիները,

զ) հավաստել, որ աուդիտն անցկացնելու ժամանակ աուդիտի ենթարկվող կազմակերպությունը կտեղեկացվի դրա ընթացքի մասին,

է) հավաստել, որ աուդիտի խմբին անհրաժեշտ ցանկացած ռեսուրսները և միջոցները կլինեն մատչելի,

ը) հաստատել գաղտնիության ապահովումը,

թ) հաստատել աշխատանքի անվտանգության ապահովումը, ծանոթանալ արտակարգ իրավիճակների համար նախատեսված ընթացակարգերին և ապահովել աուդիտի խմբի անվտանգությունը,

ժ) հաստատել բոլոր ուղեկցող անձանց անհրաժեշտությունը, ճշտել նրանց ազգանունները և դերը,

Ճա) ծանոթացնել հաշվետվություններ կազմելու մեթոդներին՝ ներառյալ անհամապատասխանությունների դասակարգումը,

Ճբ) տեղեկացնել այն պայմանների մասին, որոնց դեպքում աուդիտը կարող է դադարեցվել,

Ճգ) տեղեկացնել աուդիտի անցկացման կամ վերջնական եզրակացության վերաբերյալ բողոքարկումների քննարկման համակարգի մասին:

5.5.2.2 Աուդիտի ընթացքում, անհրաժեշտություն առաջանալու դեպքում, կարող է կնքվել պաշտոնական համաձայնություն աուդիտի խմբի և աուդիտի ենթարկվող կազմակերպության միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ:

Աուդիտի խմբում պարբերաբար փոխանակում են տեղեկատվություն, գնահատում են աուդիտի ընթացքը և, անհրաժեշտության դեպքում, աուդիտի խմբի անդամների միջև վերաբաշխում են պարտականությունները:

Աուդիտի ժամանակ աուդիտի խմբի ղեկավարը պետք է աուդիտի ենթարկվող կազմակերպության հետ պարբերաբար փոխանակի տեղեկատվություն աուդիտի ընթացքի և դրա հետ կապված բոլոր հարցերի վերաբերյալ: Աուդիտի ժամանակ ենթադրվող անմիջական և էական ռիսկի (օրինակ՝ կապված անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության կամ որակի հետ) վերաբերյալ ստացված վկայությունը պետք է անհապաղ հայտնվի ի գիտություն աուդիտի ենթարկվող կազմակերպությանը: Եթե աուդիտի վկայությունները ցույց են տալիս աուդիտի նպատակների անհրազործելիությունը, ապա աուդիտի խմբի ղեկավարը պետք է տեղյակ պահի աուդիտի ենթարկվող կազմակերպությանն աուդիտի ծրագրի ճշգրտում և վերանայում, աուդիտի նպատակների կամ ոլորտի փոփոխում, կամ աուդիտի ընդհատում ներառող միջոցների ձեռնարկման և դրա պատճառների մասին:

Աուդիտի ոլորտի յուրաքանչյուր փոփոխություն, որը կարող է ակնառու դառնալ աուդիտի անցկացման ընթացքում անհրաժեշտ է պատշաճ կերպով վերլուծել և հաստատել:

5.5.2.3 Ուղեկցող անձանց և դիտորդների դերն ու պարտականությունները պետք է իրականացվեն ՀԱՏ ԻՍՕ 19011 ստանդարտի 6.5.3 կետով սահմանված պահանջներին համապատասխան:

5.5.2.4 Աուդիտի ժամանակ տվյալների հավաքումը և համադրումը պետք է իրականացվի ստորաբաժանումների միջև փոխգործողությունների, գործունեությունների և գործընթացների վերաբերյալ տվյալների ընտրանքային հավաքման միջոցով: Աուդիտի վկայությունները պետք է հավաքվեն հարցումների, գործունեության դիտարկումների, փաստաթղթերի վերլուծության մեթոդներով:

Աուդիտի տեղեկատվության ընտրված աղբյուրները կախված են աուդիտի ոլորտից և բարդություններից և պետք է ներառեն՝

- ա) աշխատողների հարցումներ,
- բ) գործունեության, աշխատանքային միջավայրի և աշխատանքի պայմանների դիտումներ,
- գ) փաստաթղթեր (քաղաքականություն, նպատակներ, պլաններ, ընթացակարգեր, ստանդարտներ, հրահանգներ, լիցենզիաներ և թույլտվության փաստաթղթեր, մասնագրեր, գծագրեր, պայմանագրեր և պատվերներ),
- դ) ստուգումների գրառումներ (արձանագրություններ), խորհրդակցությունների արձանագրություններ, աուդիտների՝ այդ թվում ներքին աուդիտների և ղեկավարության կողմից վերլուծության մասին հաշվետվություններ, ծրագրերի ընթացաստուգման (մոնիթորինգի) վերաբերյալ գրառումներ և չափումների արդյունքներ,
- ե) ընդհանրացված տվյալներ, վերլուծության և արդյունավորության ցուցանիշներ,
- զ) աուդիտի ենթարկվող կազմակերպության ընտրանքային ծրագրերի ուսումնասիրման և նմուշառման ու չափումների գործընթացների կառավարման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկություններ,
- է) հաշվետվություններ, որոնց աղբյուրները կարող են լինել, օրինակ՝ սպառողներից հետադարձ կապը, դրսից ստացվող այլ համապատասխան տեղեկությունները, մատակարարների կողմից տրված գնահատումները,
- ը) համակարգչավորված տվյալների հիմնապահեստներ և ինտերնետիային կայքեր: Հարցումները կատարում են հաշվի առնելով իրադրությունը և հարցման ենթարկվող անձին: Ընդ որում աուդիտոր(փորձագետ)ը պետք է.
- ա) հարցումներ իրականացնի ստորաբաժանումներում այն անձանց միջև, որոնք աուդիտի ոլորտի սահմաններում կատարում են աշխատանքներ կամ լուծում են խնդիրներ,
- բ) աշխատողների հարցումներն իրականացնի աշխատանքային ժամերին և, որտեղ դա հնարավոր է՝ աշխատանքային տեղում,
- գ) հարցումները վարի բարյացակամորեն, ընդ որում, անձը նախապես պետք է հոգեբանորեն նախապատրաստված լինի հարցմանը,
- դ) բացառի հարցման պատճառը և իրականացվող գրառումները,
- ե) հարցումն սկսի իր աշխատանքի մասին պատմելու խնդրանքով,
- զ) խուսափի հուշող հարցերից,
- է) հարցման ենթարկված անձի հետ միասին ընդհանրացնի և վերլուծի հարցման արդյունքները,
- ը) շնորհակալություն հայտնի հարցման ենթարկված անձին՝ համագործակցության համար:

5.5.2.5 Աուդիտի եզրակացությունները ձևակերպելու համար աուդիտի վկայությունները պետք է համեմատվեն աուդիտի չափանիշների հետ: Աուդիտի եզրակացությունները ցույց են տալիս աուդիտի չափանիշներին այդ վկայությունների համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը: Աուդիտի եզրակացությունները կարող են պայմանավորել բարելավման հնարավորություններ՝ թե՛ դա նախատեսված է աուդիտի նպատակներով: Աուդիտի խումբը, անհրաժեշտության դեպքում, աուդիտի որոշակի փուլերում կարող է հավաքվել աուդիտի եզրակացությունների վերլուծման համար:

Աուդիտի չափանիշներին համապատասխանությունները պետք է ընդհանրացվեն՝ նշելով աուդիտի ենթարկված կազմակերպության գտնվելու վայրը, աուդիտի ենթարկված ստորաբաժանումները կամ գործընթացները: Համապատասխանության մասին աուդիտի առանձին եզրակացությունները և դրանք հաստատող վկայությունները պետք է գրի առնվեն:

Անհամապատասխանությունները և դրանք հաստատող աուդիտի վկայությունները պետք է դասակարգվեն և գրանցվեն անհամապատասխանությունների արձանագրությունում: Անհամապատասխանությունների արձանագրության ձևը տրված է Ե հավելվածում: Աուդիտի վկայությունների օբյեկտիվության հաստատման համար դրանք պետք է վերլուծվեն աուդիտի ենթարկվող կազմակերպության հետ: Աուդիտի վկայությունների և (կամ) աուդիտի եզրակացությունների վերաբերյալ կարծիքների տարածայնություններն անհրաժեշտ է վերացնել, իսկ չլուծված խնդիրները՝ փաստաթղթերով ձևակերպել:

5.5.2.6 Աուդիտի եզրակացության նախապատրաստումը:

Աուդիտի խումբը մինչև եզրափակիչ խորհրդակցությունը պետք է.

- ա) քննարկի աուդիտից ստացված տվյալները և աուդիտի նպատակներին համապատասխան այլ տեղեկատվությունները,
- բ) համաձայնեցնի աուդիտի եզրակացությունները՝ հաշվի առնելով աուդիտի գործընթացին հատուկ անորոշությունը,

զ) նախապատրաստի հանձնարարականներ, եթե դա նախատեսված է աուդիտի նպատակներով,

դ) քննարկի գործողություններն ըստ աուդիտի արդյունքների, եթե դա մտնում է աուդիտի պլանի մեջ:

5.5.2.7 Աուդիտի եզրակացությունները պետք է պարունակեն.

ա) աուդիտի չափանիշներին կառավարման համակարգի համապատասխանության աստիճանը,

բ) կառավարման համակարգի ներդրման, պահպանման և բարելավման արդյունավորությունը,

գ) կառավարման համակարգի մշտական պիտանիության, դրա համապատասխանության, արդյունավորության և բարելավման ապահովման համար ղեկավարության կողմից վերլուծության գործընթացի հնարավորությունները:

5.5.2.8 Եզրափակիչ խորհրդակցության (որի նախագահը աուդիտի խմբի ղեկավարն է) նպատակն է ներկայացնել աուդիտից ստացված տվյալները և եզրակացությունն այնպես, որ դրանք ճանաչվեն աուդիտի ենթարկվող կազմակերպության կողմից և, անհրաժեշտության դեպքում, համաձայնեցվեն ուղղիչ և կանխարգելիչ գործողությունների պլանի ներկայացման ժամկետները:

Եզրափակիչ խորհրդակցությանը պետք է մասնակցեն աուդիտի ենթարկվող կազմակերպության և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչները: Աուդիտի խմբի ղեկավարը, եթե դա անհրաժեշտ է, աուդիտի ենթարկվող կազմակերպությանը պետք է շարադրի իր կարծիքը աուդիտի ժամանակ ստեղծված այն իրադրությունների մասին, որոնք կարող են նվազեցնել վստահությունն աուդիտի եզրակացությունների նկատմամբ:

Խորհրդակցությունը պետք է լինի պաշտոնական՝ արձանագրության և մասնակիցների ցուցակի վարումով:

Աուդիտից ստացված տվյալների և եզրակացության վերաբերյալ յուրաքանչյուր տարածայնություն աուդիտի խմբի և աուդիտի ենթարկվող կազմակերպության միջև պետք է քննարկվի և, ըստ հնարավորին, լուծվի: Ընդհանուր կարծիքի չգալու դեպքում, այդ մասին պետք է մշվի կառավարման համակարգի աուդիտի արդյունքների և գնահատման ակտում (այսուհետև՝ աուդիտի ակտ) (հավելված Զ):

Եթե աուդիտի նպատակներով նախատեսված են հանձնարարականներ բարելավման վերաբերյալ, ապա դրանք պետք է ներկայացվեն՝ մշելով դրանց ոչ պարտադիր լինելը:

5.5.2.9 Կառավարման համակարգի աուդիտի արդյունքներով և, հաշվի առնելով եզրափակիչ խորհրդակցության արդյունքները, կազմում են աուդիտի ակտը (հավելված Զ), որը ստորագրում են աուդիտի խմբի ղեկավարը և աուդիտորներն (փորձագետներն) ու ներկայացնում են կազմակերպության ղեկավարին՝ ծանոթանալու:

5.5.2.10 Աուդիտի ակտում պետք է հստակորեն տրված լինի կառավարման համակարգերին ներկայացվող պահանջներ սահմանող ստանդարտներին աուդիտի ենթարկված կազմակերպության կառավարման համակարգի համապատասխանության գնահատականը:

Աուդիտի ակտում ընդգրկվում են նաև աուդիտի խմբի ղեկավարի և աուդիտի ենթարկվող կազմակերպության միջև չհամաձայնեցված հարցերը՝ շարադրելով տարբերվող տեսակետերը:

Աուդիտի ակտում ճշգրտվում են նաև եզրափակիչ խորհրդակցությունում արված դիտողություններն ու եզրակացությունները:

Աուդիտի ակտում կառավարման համակարգի ստանդարտների պահանջներին կառավարման համակարգի համապատասխանության (անհամապատասխանության) վերաբերյալ եզրակացության հետ միաժամանակ պետք է մշել նաև ուղղիչ միջոցառումների մշակման անհրաժեշտությունը, անհամապատասխանությունների վերացման ապացույցները սերտիֆիկացման մարմին ներկայացնելու ժամկետները, լրացուցիչ աուդիտի անհրաժեշտությունը:

Աուդիտի ակտը պետք է նախապատրաստվի և ուղարկվի կազմակերպության հետ համաձայնեցված ժամկետներում:

Աուդիտի ակտը և անհամապատասխանությունների արձանագրությունը կազմում են երկու օրինակից, որոնցից մեկը պահվում է սերտիֆիկացման մարմնում, իսկ մյուսը՝ կազմակերպությունում:

5.6 Աուդիտի արդյունքների քննարկումը, համապատասխանության սերտիֆիկատի հանձնման մասին որոշման ընդունումը, դրա գրանցումը և հանձնումը

5.6.1 Անհամապատասխանությունների արձանագրությունում և աուդիտի ակտում նշված անհամապատասխանությունները վերացնելուց հետո կազմակերպությունն այդ մասին ծանուցում է սերտիֆիկացման մարմնին:

Անհամապատասխանությունների վերացման արդյունքները պետք է ստուգվեն սերտիֆիկացման մարմնի աուդիտոր (փորձագետ)ների կողմից:

Անհամապատասխանությունների վերացման արդյունքների ստուգման ձևը սահմանվում է սերտիֆիկացման մարմնի կողմից:

Եթե հայտնաբերված անհամապատասխանությունները կապված չեն էական ռիսկերի հետ և հնարավոր է դրանք վերացնել աուդիտի խմբի աշխատանքի ընթացքում կամ դրանց հայտնաբերումից հետո մեկ ամսվա ընթացքում, ապա սերտիֆիկացման մարմնին կարող է բավարարել անհամապատասխանությունների վերացման մասին կազմակերպության կողմից գրավոր հավաստումը կամ էլ դրանց վերացումը կարող է ստուգվել համապատասխանության հսկողության ընթացքում:

Եթե կառավարման համակարգում հայտնաբերվել են էական ռիսկի հետ կապված թեկուզ մեկ անհամապատասխանություն և ոչ էական անհամապատասխանություններ, ապա անհամապատասխանությունների վերացումը կարող է ստուգվել կրկնական աուդիտի անցկացման միջոցով՝ ստուգելով այն պահանջները, ըստ որոնց հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

5.6.2 Կառավարման համակարգի աուդիտի արդյունքների հիման վրա աուդիտոր (փորձագետ)ները աուդիտի խմբի ղեկավարի ղեկավարությամբ կազմում են հաշվետվություն: Աուդիտի խմբի ղեկավարը պատասխանատու է հաշվետվության նախապատրաստման և դրա բովանդակության համար: Աուդիտի հաշվետվությունը կազմում են հայտնաբերված անհամապատասխանությունների վերացումն ստուգելուց հետո:

Աուդիտի հաշվետվության ընդհանուր մասում պետք է նշված լինեն աուդիտի ենթարկված կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, սերտիֆիկացման մարմնի անվանումը:

Աուդիտի հաշվետվությունը պետք է ընդգրկի աուդիտի վերաբերյալ լիակատար, ճշգրիտ, հակիրճ և հասկանալի գրառումներ և պետք է ներառի հետևյալ հարցերի պատասխանները.

- ա) աուդիտի նպատակները,
- բ) աուդիտի ոլորտը, մասնավորապես՝ աուդիտի ենթարկված կազմակերպական և գործառնական ստորաբաժանումների կամ գործընթացների անվանումը և աուդիտի ժամանակահատվածը,
- գ) տեղեկություններ աուդիտի խմբի ղեկավարի և անդամների վերաբերյալ,
- դ) աուդիտի անցկացման ամսաթիվը և տեղը,
- ե) աուդիտի չափանիշները,
- զ) աուդիտից ստացված տվյալները, այդ թվում՝ փաստաթղթերի վերլուծության արդյունքները,
- է) աուդիտի եզրակացությունը:
Անհրաժեշտության դեպքում աուդիտի հաշվետվության մեջ կարող է ընդգրկվել.
- ը) կառավարման համակարգերի վերլուծության ենթակա փաստաթղթերի ցանկը,
- թ) աուդիտի ենթարկվող կազմակերպության ներկայացուցիչների ցուցակը,
- ժ) անցկացրած աուդիտի արդյունքները, ներառյալ՝ անորոշությունները և (կամ) աուդիտի անցկացման ժամանակ յուրաքանչյուր խոչընդոտը, որը կարող է ազդել աուդիտի եզրակացության հավաստիության վրա,
- ժա) աուդիտի պլանին համապատասխան՝ աուդիտի ոլորտի սահմաններում աուդիտի նպատակներին հասնելու հաստատումը,
- ժբ) այն ոլորտները, որոնք չեն ընդգրկվել աուդիտում, բայց մտնում են աուդիտի ոլորտի մեջ,
- ժգ) աուդիտի խմբի և աուդիտի ենթարկվող կազմակերպության միջև չլուծված հակասությունները,
- ժդ) բարելավման հանձնարարականները, եթե դա նախատեսված է աուդիտի նպատակներով,

ժե) անհրաժեշտության դեպքում՝ ըստ աուդիտի արդյունքների գործողությունների համաձայնեցված պլանը,

ժզ) հաշվետվության բովանդակության գաղտնիության մասին հայտարարությունը, ժէ) աուդիտի հաշվետվության օրինակների հասցեագրման ցուցակը:

Հաշվետվությունն ստորագրում են աուդիտի խմբի ղեկավարը և աուդիտոր (փորձագետ)ները, հաստատում է սերտիֆիկացման մարմնի ղեկավարը:

Աուդիտի հաշվետվությունը պետք է ուղարկվի աուդիտի ենթարկված կազմակերպության կողմից որոշված հասցեատերերին:

Աուդիտի խմբի անդամները և բոլոր նրանք, ովքեր ստանում են աուդիտի հաշվետվությունը, պետք է պահպանեն հաշվետվության բովանդակության գաղտնիության պահանջը:

Աուդիտի հաշվետվությունը աուդիտի պատվիրատուի սեփականությունն է:

5.6.3 Աուդիտի դրական արդյունքների դեպքում սերտիֆիկացման մարմնի ղեկավարը որոշում է ընդունում սերտիֆիկատի հանձնման (հանձնումը մերժելու) վերաբերյալ՝ ըստ է հավելվածում տրված ձևի:

Սերտիֆիկատի հանձնման վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում սերտիֆիկացման մարմինը ձևակերպում է սերտիֆիկատը [1]: Սերտիֆիկատների ձևերը և լրացման վերաբերյալ պարզաբանումները տրված են Ը հավելվածում:

Սերտիֆիկատի գործողության ժամկետը սահմանվում է երեք տարուց ոչ ավելի:

5.6.4 Կազմակերպության պահանջով սերտիֆիկացման մարմինը ձևակերպում է սերտիֆիկատի կրկնօրինակ՝ իր կողմից սահմանված հատուկ նմուշի պաշտպանված բլանկների վրա և վավերացնում կնիքով:

5.6.5 Սերտիֆիկացման մարմինը սերտիֆիկատը գրանցում է ՀՍՏ 5.6 ստանդարտով սահմանված գրանցամատյանում և տվյալները ներկայացվում է համապատասխանության գնահատման ազգային մարմին, իսկ սերտիֆիկատը հանձնում է կազմակերպությանը:

Կառավարման համակարգի աուդիտի բացասական արդյունքների դեպքում կազմակերպությանը հանձնվում է սերտիֆիկատի հանձնումը մերժելու մասին որոշումը:

5.6.6 Սերտիֆիկատը ձևակերպելու հետ միաժամանակ սերտիֆիկացման մարմնի և սերտիֆիկացված կազմակերպության միջև կնքում է սերտիֆիկատի օգտագործման պայմանագիր՝ ըստ Թ հավելվածի, որում սահմանվում են սերտիֆիկացման մարմնի և սերտիֆիկացված կազմակերպության պարտավորությունները:

5.6.7 Կառավարման համակարգի սերտիֆիկացման փաստաթղթերը սերտիֆիկացման մարմինը պահում է սերտիֆիկատի գործողության ժամկետի ավարտի օրվանից սկսած հինգ տարուց ոչ պակաս ժամկետով:

6 Սերտիֆիկացման մասնակիցների գործառույթները

6.1 Աուդիտոր (փորձագետ)ը կառավարման համակարգի աուդիտի անցկացման ժամանակ պետք է.

- աուդիտի ենթարկվող կազմակերպության անձնակազմին տեղեկացնի և պարզաբանի աուդիտի պահանջները,

- ճիշտ և արդյունավետ պլանավորի և կատարի իր վրա դրված գործառույթները,

- մշակի հարցաթերթիկը՝ կազմակերպության կառավարման համակարգի գնահատման համար,

- գրավոր շարադրի դիտարկման արդյունքները,

- աուդիտի խմբի ղեկավարին ներկայացնի տեղեկատվություն աուդիտի արդյունքների վերաբերյալ,

- պատշաճ վիճակում պահի աուդիտի ժամանակ օգտագործվող փաստաթղթերը և ապահովի տեղեկատվության պահպանվածությունն ու գաղտնիությունը,

- գործի աուդիտի պլանով սահմանված շրջանակներում,

- լինի օբյեկտիվ և անկողմնակալ,

- հավաքի և վերլուծության ենթարկի հավաստի և բավարար տվյալներ աուդիտի ենթարկվող կազմակերպության կառավարման համակարգի վերաբերյալ եզրակացություն կազմելու համար,

- անուշադրության չմատնի ցանկացած տվյալ, որը կարող է ազդել աուդիտի արդյունքների վրա, և անհրաժեշտության դեպքում, պահանջի ավելի ընդլայնված ստուգում,

- իրականացնի կառավարման համակարգի ստանդարտների կամ կազմակերպության կառավարման համակարգի փաստաթղթերով սահմանված պահանջների հետ անհամապատասխանությունների նույնականացում,

- անհամապատասխանությունների վերացումից հետո իրականացնի ուղղիչ գործողությունների արդյունավետության հսկողություն,

- պահպանի քաղաքավարության նորմերը և լինի հավասարակշռված:

6.2 Աուդիտի խմբի ղեկավարը պետք է.

- կազմավորի աուդիտի խումբը (աուդիտորներ և տեխնիկական փորձագետներ),

- բաժանի պարտավորությունները աուդիտի խմբի անդամների միջև,

- սահմանի կոնկրետ աուդիտոր (փորձագետ)ի համար սահմանված պահանջների պահպանման հսկողություն և ապահովի դրանց կատարումը,

- մշակի աուդիտի ծրագիրը,

- աուդիտի խմբին ներկայացնի աուդիտի ենթարկվող կազմակերպության ղեկավարությանը,

- վերլուծի աուդիտի ենթարկվող կազմակերպությանը վերաբերող տեղեկատվությունը և փաստաթղթերը՝ կազմակերպության համապատասխանությունը զնահատելու համար,

- կազմակերպության ղեկավարությանը և սերտիֆիկացման մարմնին տեղեկացնի աուդիտի անցկացմանը խոչընդոտող դժվարությունների մասին,

- վերջնական որոշում ընդունի անհամապատասխանությունների էական և ոչ էական ռիսկերի բաժանման առումով,

- ձևակերպի և ներկայացնի աուդիտի ակտը և հաշվետվությունը:

6.3 Կազմակերպության պարտականությունները և պատասխանատվությունը

6.3.1 Կազմակերպությունը պարտավոր է.

- ներդնել կառավարման համակարգերին ներկայացվող պահանջներ սահմանող փաստաթղթերին՝ ՀԱՏ ԻՍՕ 9001 կամ ՀԱՏ ԻՍՕ 14001 կամ ՀԱՏ ԻՍՕ 22000, համապատասխանող կառավարման համակարգ՝ հաշվի առնելով թույլատրելի բացառությունները,

- հայտի հետ միաժամանակ սերտիֆիկացման մարմին ներկայացնել կառավարման համակարգի ձեռնարկը (ՎԱՎԿԿՀ պլանը), հարցաթերթիկը, ելակետային տեղեկատվությունները և կառավարման համակարգի փաստաթղթերը, որոնց ցանկը որոշվում է սերտիֆիկացման մարմնի կողմից,

